ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/104

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
Մասնակից՝ «Արմստրոյ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Գասպարյանի,

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ 26/26-1/11016-2019 գրությամբ «Արմստրոյ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 21.06.2019թ. թիվ 08/15.3/7709-19 գրության հիման վրա, 02.07.2019թ. «Արմստրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը 21.06.2019թ. թիվ 08/15.3/7709-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Արմստրոյ» ՍՊԸ-ի միջև 15.04.2019թ.-ին կնքվել է թիվ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-3» ծածկագրով պետական գնման պայմանագիրը:

Նշված կազմակերպությունը պայմանագրերով սահմանված ժամկետներում չի կատարել իր պարտավորությունները, ինչի արդյունքում Նախարարությունը՝ հիմք ընդունելով կնքված պայմանագրերի 2.1.3 կետի դրույթները, միակողմանի լուծել է վերոհիշյալ պայմանագրերը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացնում եմ «Արմստրոյ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Արմստրոյ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Արմստրոյ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 03.07.2019թ. գրությամբ դիմել է «Արմստրոյ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ

26/26-1/11016-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով տեղի ունեցած մրցույթը 15.04.2019 թվականին կնքվել է «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-3» ծածկագրերով պետական գնման նախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման պայմանագիր /հիմք Պայմանագիր/:

Համաձայն 2019 թվականի ապրիլի 15-ին կնքված պայմանագրի անհրաժեշտ էր իրականացնել Մ-10, Սևան-Մարտունի-Գեղամ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ5+750-կմ5+886 երկարությամբ մետաղական արգելափակոցների տեղադրման, Մ-10 Սևան-Մարտունի-Գեղամ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ6+850-կմ7+034 հատվածի հողային պաստառի վերականգման և մետաղական արգելափակոցների տեղադրման, Հ-5, Հ-6- Նոր Գեղի Արգել-Արզական-Հրազդան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ36+000-կմ36+700 հատվածի հիմնանորոգման Հ-64, Բերդ-Արծվաբերդ-Չինարի ավտոճանապարհի 18-րդ կիլոմետրում փլուզված հողային պաստառի վերականգման և Տ-1-45, Ապարան-Ձորագլուխ ավտոճանապարհի Ձքնաղ-Ձորագլուխ 5,4կմ հատվածի հիմնանորոգման, նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ:

30.04.2019 թվականին Պատվիրատուի կողմից կատարվող աշխատանքի փոփոխության վերաբերյալ, ինչը նշված չի եղել տեխնիկական բնութագրում, ուղարկվել է «շրջաբերական նամակ» , որի արդյունքում կատարվող աշխատանքի ծավալը փոխվել է:

31.05.2019 թվականին Հայցվորը ներկայացրել է նախագծերը պատշաճ կարգով:

Պայմանագրի լուծվել է առանց ծանուցման 31.05.2019 թվականին:

Պայմանագրի լուծումից հետո 04.06.2019 թվականին, արդեն լուծված պայմանագրի նախագծերի շտկման վերաբերյալ տրամադրվել է ժամանակ, հիմքում դնելով նախագծերի լուծումների սխալ ընտրված լինելը:

07.06.2019 թվականին կրկին ներկայացվել է նախագծերը, նշելով, որ նախկինում ներկայացվածը ևս պատշաճ է:

Պատասխանողը հասցեի փոփոխության վերաբերյալ չի ծանուցել Հայցվորին. նախագծերը ուղրակվել են պայմանագրում նշված հասցեով:

Գտնում եմ, որ պետք է մերժել ներկայացված բողոքը հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի համաձայն. «1. Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը»:

15 ապրիլի 2019 թվականին կնքված Պայմանագրի շրջանակներում իրականացվել և պատասխանողին են ներկայացվել Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ5+750-կմ5+886 երկարությամբ մետաղական արգելափակոցների տեղադրման, Մ-10 Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ6+850-կմ7+034 հատվածի հողային պաստառի վերականգման և մետաղական արգելափակոցների տեղադրման, Հ-5, Հ-6- Նոր Գեղի Արգել-Արզական-Հրազդան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ36+000- կմ36+700 հատվածի հիմնանորոգման Հ-64, Բերդ-Արծվաբերդ-Չինարի ավտոճանապարհի 18-րդ կիլոմետրում փլուզված հողային պաստառի վերականգման և Տ-1-45, Ապարան-Ձորագլուխ ավտոճանապարհի Չքնաղ-Ձորագլուխ 5,4կմ հատվածի հիմնանորոգման, նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման նախագծերը: Ներկայացնելուց հետո նույն օրը լուծվել է պայմանագիրն անհիմն: Ավելին Պատասխանողն ըստ էության ընդունելով իր կողմից թույլ տրված ընթացակարգային խախտումը փորձել է շտկել, լուծումից հետո 04.06.2019 թվականին, արդեն լուծված պայմանագրի նախագծերի շտկման վերաբերյալ տրամադրվել է 3 օրյա ժամկետ հիմքում դնելով նախագծերի լուծումների սխալ ընտրված լինելը առանց որևէ եզրակացության, հիմնավորման: Նշված ժամանակահատվածում կրկին ներկայացվել են նախագծերը, որի վերաբերյալ որևէ դիրքորոշում չի հայտնվել: Նման պայմաններում ակնհայտ է, որ Ընկերության կողմից կատարվել են պայմանագրային պարտավորությունները, սակայն պայմանագիրը լուծվել է անհիմն: Ավելին Պատվիրատուն ուղարկել է պայմանագրով չնախատեսված շրջաբերական նամակ, որն էականորեն փոփոխում է աշխատանքների ծավալը, ընդ որում ամբողջ ծրագրի շրջանակներում:

Տվյալ դեպքում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար գնահատման ենթակա է մասնակիցների «վարքագիծը»: Սույն գործով Ընկերությունը դրսևորել է պատշաճ վարքագիծ, հետևաբար բողոքն անհիմն է և ենթակա մերժման, ուստի խնդրում եմ մերժել:

Նշեմ նաև, որ ԵԴ/17289/02/19 քաղաքացիական գործով վիճարկվում է ի թիվս մյուս պայմանագրի լուծումների, սույն պայմանագրի լուծումը և ներկայացվել է հայցի ապահովման միջնորդություն, որի վերաբերյալ դեռևս առկա չէ որոշում:»:

Ելնելով վերոգրյալից, Բողոքներ քննող անձին խնդրել են «Արմստրոյ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/104 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Արմստրոյ» ՍՊԸ-ի միջև 15.04.2019թ.-ին կնքվել է թիվ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-3» ծածկագրով աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (այսուհետ' Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 20 (քսան) օր:

15.04.2019թ.-ին կնքված Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 համաձայնագրի 2.1 կետի համաձայն՝ սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

www.gnumner.am համացանցային կայքում 31.05.2019թ. հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, հիմք ընդունելով «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-3» ծածկագրով կնքված պայմանագրի 2.1.3 կետի պահանջները

(խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը)՝ որոշել է 2019թ.-ի մայիսի 31-ին միակողմանի լուծել «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-3» ծածկագրով գնման պայմանագիրը:

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Արմստրոյ» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի ապրիլի 15-ին կնքված թիվ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-3» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում ընկերությունը մինչև 2019 թվականի մայիսի 5-ը պետք է իրականացներ Մ-10, Սևան-Մարտունի-9-ետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ5+750-կմ5+886 հատվածի հողային պաստառի վերականգնման և մետաղական արգելափակոցների տեղադրման, Մ-10, Սևան-Մարտունի-9-ետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ6+850-կմ7+034 հատվածի հողային պաստառի վերականգնման և մետաղական արգելափակոցների տեղադրման, Հ-64, Բերդ-Արծվաբերդ-Չինարի ավտոճանապարհի 18-րդ կիլոմետրում փլուզված հողային պաստառի վերականգնման և մինչև 2019 թվականի մայիսի 15-ըՀ-5, /Հ-6/-Նոր Գեղի-Արգել-Արզական-Հրազդան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ36+000-կմ36+700 հատվածի հիմնանորոգման, Տ-1-45, Ապարան-Ձորագլուխ ավտոճանապարհի Զքնաղ-Ձորագլուխ /5,4կմ/ հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ, ինչը պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել:

Հիմք ընդունելով «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-3» ծածկագրով կնքված պայմանագրի 2.1.3 կետի պահանջները՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը որոշել է 2019թ.-ի մայիսի 31-ին միակողմանի լուծել «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-3» ծածկագրով գնման պայմանագիրը:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Ընկերությանն ուղղված 04.06.2019թ. թիվ 08/14.1/7204-19 գրության համաձայն՝ *«Ի պատասխան Ձեր 2019 թվականի մայիսի 31-ի թիվ 50/19 գրության՝ հայտնում եմ, որ Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 5+750+կմ 5+886 հատվածի հողային պաստառի վերականգնման և մետաղական արգելափակոցների տեղադրման, ինչպես նաև Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 6+850+կմ 7+034 հատվածի հողային պաստառի վերականգնման և մետաղական արգելափակոցների տեղադրման աշխատանքների նախագծային լուծումները սխալ են ընտրված և ենթակա չեն ընդունման նախարարության կողմից:*

Ինչ վերաբերում է Հ-5, /Հ-6/-Նոր Գեղի-Արգել-Արզական-Հրազդան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+000+կմ 36+700 հատվածի

հիմնանորոգման աշխատանքների նախագծային փաստաթղթերի փաթեթին (նախարարության ուսումնասիրությանը տրամադրվել է մեկ անգամ), անհրաժեշտ է եռօրյա ժամկետում վերացնել նախարարության կողմից կազմված դիտողությունները (կցվում է) և լրամշակված տարբերակով ներկայացնել հաստատման:»:

«Արմստրոյ» ՍՊԸ-ն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 04.06.2019թ. թիվ 08/14.1/7204-19 գրությանն ի պատասխան հայտնել է հետևյալը. *«Ի պատասխան Ձեր 08/14.1/7204.19 գրության, Ձեզ ենք ներկայացնում Հ-5, /Հ-6/- Նոր Գեղի-Արգել-Հրազդան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+000+կմ 36+700 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծային փաստաթղթերը և նշենք, որ Մեր կողմից վերը նշված օբյեկտի նախագծային աշխատանքները ներկայացված են եղել նորմերին և տեխնիկական բնութագրերին համապատասխան, սակայն ևս մեկ անգամ կներկայացնենք Ձեզ:*

Ինչ վերաբերվում է Մ10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 5+750+կմ 5+886 հատվածի հողային պաստառի վերականգնման և մետաղական արգելափակոցների տեղադրման, ինչպես նաև Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 6+850+կմ 7+034 հատվածի հողային պաստառի վերականգնում և մետաղական արգելափակոցների տեղադրման աշխատանքների նախագծային լուծումները տրված են ճիշտ տեխնիկական բնութագրերին համապատասխան:

Ըստ տեխնիկական առաջադրանքի պահանջվում է իրականացնել հողային պաստառի վերականգնում (առկա են փոքր փլուզված հատվածներ) և արգելափակոցների տեղադրում սահմանափակված տեղամասերում կմ 5+750+ կմ 5+886-136մ և կմ 6+850+ կմ 7+034-184մ երկարություններով:

Ըստ մեր հարցմանը «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ից ստացել ենք տեղեկատվություն առաջիկայում 3մ Սևանի ջրերի մակարդակի բարձրացման վերաբերյալ (տարեկան 30 սմ), այսինքն հաշվի առնելով ալեկոծությունը 1,5 մ, պահանջվում է 4,5+5մ բարձրությամբ գաբիոնային շարվածք, որը տեղադրելու դեպքում ճանապարհը առաջիկայում կլիներ Սևանա լճի ջրերի մակարդակից ցածր:

Երկու տեղամասերն էլ գտնվում են գոգավոր կորի շրջանակներում և Կմ5+740+կմ 5+900 (որքանով իրականացված էր չափագրումը) իրականացվել է 3 մ բարձրությամբ գաբիոևայիև շարվածք, որը ճանապարհի նախագծային նիշի բարձրացումից հետո գտնվում է միևնույն մակարդակի վրա՝ 1,5 մ ջրի մակարդակի բարձրացում 5 տարվա կտրվածքով և 1.5 մ ալիքների ալեկոծություն:

Նույն մոտեցումն է իրականացվել կմ6+820+կմ 7+034 (չափագրում) հատվածում, միայն վերջին 70 մ հատվածում է նախագծվել 2 մ բարձրությամբ գաբիոնային շւսրվածք: Ավելի բարձր նախագծային նիշ ստանալու համար, որը թույլ կտար գաբիոնային շարվածքի 4,5 մ բարձրություն ապահովելուն, հարկավոր էր փոփոխություն կատարել տեխնիկական առաջադրանքում ավելի երկար տարածություն ընդգրկելու (մինչև և հետո), որպեսզի հնարավոր լիներ լծորդել գոյություն ունեցող ճանապարհային նիշը նախագծային նիշի հետ (ինչը իրականացվել է մեր նախագծում):

Այսինքն Ձեր կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքը և Ձեր կողմից հնչեցրած պահանջները չեն համապատասխանում իրար, որը մրցույթից առաջ Ձեր մասնագետները պարտավոր էին ճիշտ հաշվարկել, այսինքն նշեին ճիշտ տեղամասերը ըստ կիլոմետրերի և արդյունքում նման իրավիճակ չէր ստեղծվի:

Խնդրում ենք Ձեզ ընդունել և տալ դրական եզրակացություն մեր կողմից իրականացրած վերը նշված օբյեկտների նախագծային աշխատանքների վերաբերյալ:»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ 26/26-1/11016-2019 գրությամբ «Արմստրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն' պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն' պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից

հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Մ-10, Սևան-Մարտունի-Գետաի միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ5+750 - կմ5+886 հատվածի հողային պաստառի վերականգնման և մետաղական արգելափակոցների տեղադրման, Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ6+850 - կմ7+034 հատվածի հողային պաստառի վերականգնման և մետաղական արգելափակոցների տեղադրման, Հ-5, /Հ-6/- Նոր Գեղի-Արգել-Արզական-Հրազդան հանրապետական նշանակության ավտոճանա-պարհի կմ36+000 - կմ36+700 հատվածի հիմնանորոգման Հ-64, Բերդ-Արծվաբերդ-Չինարի ավտոճանապարհի 18-րդ կիլոմետրում փլուզված հողային պաստառի վերականգնման և Տ-1-45, Ապարան-Ձորագլուխ ավտոճանապարհի Ձքնաղ-Ձորագլուխ /5,4կմ/ հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Արմստրոյ» ՍՊԸ-ի միջև 15.04.2019թ.-ին կնքված թիվ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-3» ծածկագրով աշխատանքների կատարման պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով

սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել մինչև 05.05.2019թ.-ը:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Ընկերությանն ուղղված 04.06.2019թ. թիվ 08/14.1/7204-19 գրության համաձայն՝ *«Ի պատասխան Ձեր 2019 թվականի մայիսի 31-ի թիվ 50/19 գրության՝ հայտնում եմ, որ Մ-10, Սևան-Մարտունի-Գեղամ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 5+750+կմ 5+886 հատվածի հողային պաստառի վերականգնման և մետաղական արգելափակոցների տեղադրման, ինչպես նաև Մ-10, Սևան-Մարտունի-Գեղամ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 6+850+կմ 7+034 հատվածի հողային պաստառի վերականգնման և մետաղական արգելափակոցների տեղադրման աշխատանքների նախագծային լուծումները սխալ են ընտրված և ենթակա չեն ընդունման նախարարության կողմից:*

Ինչ վերաբերում է Հ-5, /Հ-6/-Նոր Գեղի-Արգել-Արզական-Հրազդան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+000+կմ 36+700 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծային փաստաթղթերի փաթեթին՝ (նախարարության ուսումնասիրությանը տրամադրվել է մեկ անգամ), անհրաժեշտ է եռօրյա ժամկետում վերացնել նախարարության կողմից կազմված դիտողությունները (կցվում է) և լրամշակված տարբերակով ներկայացնել հաստատման:»:

«Արմստրոյ» ՍՊԸ-ն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 04.06.2019թ. թիվ 08/14.1/7204-19 գրությանն ի պատասխան հայտնել է հետևյալը. *«Ի պատասխան Ձեր 08/14.1/7204.19 գրության, Ձեզ ենք ներկայացնում Հ-5, /Հ-6/- Նոր Գեղի-Արգել-Հրազդան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+000+կմ 36+700 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծային փաստաթղթերը և նշենք, որ Մեր կողմից վերը նշված օբյեկտի նախագծային աշխատանքները ներկայացված են եղել նորմերին և տեխնիկական բնութագրերին համապատասխան, սակայն ևս մեկ անգամ կներկայացնենք Ձեզ:*

Ինչ վերաբերվում է Մ10, Սևան-Մարտունի-Գեղամ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 5+750+կմ 5+886 հատվածի հողային պաստառի վերականգնման և մետաղական արգելափակոցների տեղադրման, ինչպես նաև Մ-10, Սևան-Մարտունի-Գեղամ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 6+850+կմ 7+034 հատվածի հողային պաստառի վերականգնում և մետաղական արգելափակոցների տեղադրման աշխատանքների նախագծային լուծումները տրված են ճիշտ տեխնիկական բնութագրերին համապատասխան:

Ըստ տեխնիկական առաջադրանքի պահանջվում է իրականացնել հողային պաստառի վերականգնում (առկա են փոքր փլուզված հատվածներ) և արգելափակոցների տեղադրում սահմանափակված տեղամասերում կմ 5+750+ կմ 5+886-136մ և կմ 6+850+ կմ 7+034-184մ երկարություններով:

Ըստ մեր հարցմանը «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ից ստացել ենք տեղեկատվություն առաջիկայում 3մ Սևանի ջրերի մակարդակի բարձրացման վերաբերյալ (տարեկան 30 սմ), այսինքն հաշվի առնելով ալեկոծությունը 1,5 մ, պահանջվում է 4,5+5մ բարձրությամբ գաբիոնային շարվածք, որը տեղադրելու դեպքում ճանապարհը առաջիկայում կլիներ Սևանա լճի ջրերի մակարդակից ցածր:

Երկու տեղամասերն էլ գտնվում են գոգավոր կորի շրջանակներում և Կմ5+740+կմ 5+900 (որքանով իրականացված էր չափագրումը) իրականացվել է 3 մ բարձրությամբ գաբիոևայիև շարվածք, որը ճանապարհի նախագծային նիշի բարձրացումից հետո գտնվում է միևնույն մակարդակի վրա՝ 1,5 մ ջրի մակարղակի բարձրացում 5 տարվա կտրվածքով և 1.5 մ ալիքների ալեկոծություն:

Նույն մոտեցումն է իրականացվել կմ6+820+կմ 7+034 (չափագրում) հատվածում, միայն վերջին 70 մ հատվածում է նախագծվել 2 մ բարձրությամբ գաբիոնային շւսրվածք: Ավելի բարձր նախագծային նիշ ստանալու համար, որը թույլ կտար գաբիոնային շարվածքի 4,5 մ բարձրություն ապահովելուն, հարկավոր էր փոփոխություն կատարել տեխնիակական առաջադրանքում ավելի երկար տարածություն ընդգրկելու (մինչև և հետո), որպեսզի հնարավոր լիներ լծորդել գոյություն ունեցող ճանապարհային նիշը նախագծային նիշի հետ (ինչը իրականացվել է մեր նախագծում):

Այսինքն Ձեր կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքը և Ձեր կողմից հնչեցրած պահանջները չեն համապատասխանում իրար, որը մրցույթից առաջ Ձեր մասնագետները պարտավոր էին ճիշտ հաշվարկել, այսինքն նշեին ճիշտ տեղամասերը ըստ կիլոմետրերի և արդյունքում նման իրավիճակ չէր ստեղծվի:

Խնդրում ենք Ձեզ ընդունել և տալ դրական եզրակացություն մեր կողմից իրականացրած վերը նշված օբյեկտների նախագծային աշխատանքների վերաբերյալ:»:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, Բողոքներ քննող անձը գտնում է, որ պայմանագիրը համարվում է լուծված այն դեպքում, երբ Պատվիրատուն միակողմանիորեն հրաժարվել է պայմանագիրը կատարելուց:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուն հրաժարվելով Պայմանագրի կատարումից, միակողմանիորեն լուծելով այն,

միևնույն ժամանակ իր 04.06.2019թ.-ի թիվ 08/14.1/7204-19 գրությամբ փաստել է, որ Պայմանագրի առարկան կազմող Հ-5, /Հ-6/-Նոր Գեղի-Արգել-Արզական-Հրազդան հանրապետա-կան նշանակության ավտոճանապարհի կմ 36+000+կմ 36+700 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերում առկա տեխնիկական բնույթի թերությունները եռօրյա ժամկետում վերացնելու դեպքում, նախարարությունը կընդունի կատարված աշխատանքները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի գործողությունները վկայում են պայմանագրային հարաբերությունների շարունակման, վերջինիս պայմանագրի կատարումից չհրաժարվելու մասին: Ուստի նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին՝ ուսումնասիրելով Մասնակցի կողմից ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 04.06.2019թ. թիվ 08/14.1/7204-19 գրությանն ի պատասխան ներկայացված գրությունը, այն համադրելով գործում առկա փաստերի հետ, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ «Արմստրոյ» ՍՊԸ-ի կողմից ձեռնարկվել են հնարավոր բոլոր գործողություններն՝ ուղղված գնումների գործընացին ստանձնած պարտավորությունների կատարմանը, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել տրամաբանական ավարտին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ 26/26-1/11016-2019 գրությամբ «Արմստրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**